

վերցնել և զանկայ ընդհանուր ազգին, գոնե ըստ մասին ծանօթացնել»:

Հարկաւ ցանկալի կըլինէր մեզ համար, որ հեղինակն իւր նիւթերի մէջ աւելի ընտրութիւն արած լինէր և աւելի լուրջ ոճով գրէր՝ խուսափելով աւելորդ ածականներից, անշանակ մակդիրներից և պարզամիտ (naïv) նկարագիրներից, սակայն ոճը նոյն իսկ մարդն է: չպահանջենք անհնարներ, շատերի համար գուցէ այս պարզութիւնն իսկ գրքիս հրապոյրներից մէկն համարուի: Այս գիրքը կարող ենք օտարութեան մէջ կիսնուող հայութեան յուշարձանն համարել: Եկեղեցիների անխորութիւն քարոզողները թող այս օրինակովս էլ տեսնեն, որ արտաքին Հայաստանեայց եկեղեցու չիք փրկութիւն հայութեան:

A. Carrière, La Légende D'Abgar dans l'histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris 1895. Impr. nationale. Եր. 357—414.

Կար ժամանակ, երբ ֆրանսական արեւելագետներն անընդհատ շարքերով հայկական գրականութեան ուսումնասիրութիւններ էին ընծայում, սակայն վաղուց է, որ այդ եռանդուն գործունէութիւնը դադարել է: Փարիզու «արեւելեան կենդանի լեզուների վարժարանի» ուսուցչապետ պ. Ա. Կարրիէրն է միայն, որ իւր այլ պարապմունքներից աւելացած ժամանակը նուիրում է հայկական գրականութեան: Յարգելի գիտնականի այս աշխատութիւնը պարտական ենք «արեւելեան կենդանի լեզուների վարժարանի» հարկւրամակին, որի յիշատակին եղած հրատարակութեան մի մասն է կազմում այս շքեղ մենագրութիւնը:

Հայ բանասէրներին յայտնի է, որ Գուտշմիդից սկսած եւրոպական բանասէրների մի մասն մինչև ցայսօր ձգնում են ցոյց տալ, թէ հայ պատմութեան նախահայր Մ. Խորենացին և դարու մատենագիր չէ: Յարգելի ֆրանսական գիտնական պ. Ա. Կարրիէրն Մ. Խորենացու մասին այս երրորդ շարադրութիւնն է ահա, որ հրատարակում է. բարեխառնարար այդ շահագրգիռ հետաքննութիւններն ամենքն էլ հայերէն են թարգմանուած և այս երրորդն ևս թարգմանուած է: Նախկին երկու շարադրութեանց մասին թեր և դէմ առարկութիւններ ևս կըսած են. անշուշտ այս վերջին հմտալից քննադատութիւնն ևս առարկութիւններ յառաջ կըբերէ: Պ. Ա. Կարրիէրը հիմնուելով իւր նախկին և ներկայ հետազոտութեանց վրայ՝ պնդում է՝ թէ Մ. Խորենացին ութերորդ դարուց առաջ չէր կարող գրել իւր պատմութիւնն և յոյս ունի,

որ շուտով պիտի յաջողի նորանոր աղբիւրների միջոցով ցոյց տալու մերձաւորապէս այն որոշ ժամանակամիջոցը, երբ գրուած է «Հայոց պատմութիւնը»:

Առաջիկայ աշխատութեան մէջ յարգելի գիտնականը ձեռնարկել է Խորենացու գործ դրած աղբիւրների քննութեան և ճգնել է ցոյց տալ այն եղանակը, որով Խորենացին օգտուում էր իւր աղբիւրներից: Հետազոտութեան նպատակն է մատնանիշ անել այն ազատութեան վրայ, որով Խորենացին վարուում էր իւր աղբիւրների հետ, ցոյց տալ այն հարուստ երևակայութիւնը, որով երբեմն Մովսէս ընդարձակում էր իւր աղբիւրներն և վերջապէս ուշադրութիւն հրաւիրել նրա այն եռանդի վրայ, որով նա ամենայն ինչ հայացնում էր և մտցնում հայոց պատմութեան մէջ, որ ամենին կապ չունէր հայկական պատմութեան հետ: Այս առաջադրութիւններն հաստատուելու համար պ. Կարրիէրն առնում է «Հայոց պատմութեան Բ. Գրքի ԻԳ—12 գլխերը, ուր պատմուած են Արշամի, Արգարի, Անանունի և Սանատրուկի պատմութիւնները»:

Ամբողջ քննադատութիւնն աչքէ անցնելով պիտի խոստովանենք, որ հեղինակիս այս հետազոտութիւնն աւելի լուրջ տպաւորութիւն է գործում մեզ վերայ, քան թէ նախկինները: սակայն միանգամայն ստիպուած ենք ասելու, որ զլիաւոր սկզբունքներն և մասնական քննութիւններից շատերն արդէն իսկ յայտնի էին: Գուտշմիդը իւր նշանաւոր քննադատութեան մէջ այն եղբակացութեան էր հասել, որ «Խորենացին երբեք չէ ստում և որ նրա աւանդած ամէն մի դէպքը հիմնուած է որեւէ ստոյգ պատմական անցքի վրայ»: այս նոյնը աւելի մեծ չափով ցուցել է և պ. Ա. Կարրիէրը: Արշամի մտացածին լինելը, Արգարու և Անանունի պատմութեան բոլոր աղբիւրները «Հայոց պատմութեան» հետ արդէն իսկ բացատրել էր Գուտշմիդը իւր «Ուռհայի թագաւորութեան» պատմութեան մէջ, որ յարգելի գիտնականն էլ յիշատակում է: Թեպէտ ոչ ամենուրեք, Արգարու թղթի հայերէն թարգմանութեան միջոցին հայացնելու խնդիրն իսկ արդէն պարզուած էր: Ալլիշանի հրատարակութեան մէջ, թէպէտ գիտնական հրատարակին այդ կարծիքին ինքն հակադաս է, Յամենայն դէպս դեռ պարզուած չէ այն խնդիրը՝ թէ ո՞վ է այդ թղթի թարգմանիչն ու հայացնողն, որպէս զի հնար ունենանք նրա և Խորենացու յարաբերութիւններն որոշել:

Հետազոտութեան մէջ նոր են այն փաստերը, որոնցով ապացուցել է ճգնած՝ թէ Մովսէսը Յուլիոս Ափրիկանոսի գործը ճանաչել է միայն Եւսեբիոսից և Յովսէփոսի գործերից օգտուել է մի-



միայն հրէից պատերազմի պատմութիւնից, Ինձ թուում է՝ թէ այդ խնդիրները վերջնականապէս լուծել է պ. Կարրիէրը:

Խորենացու «Հայոց պատմութեան» կնճռոտ խնդրի լուծման անսպթաքելի եղանակն անշուշտ այս ձևով մանրակրկիտ քննութիւնն է: որի ընթացքում սակայն հեռու պիտի լինին կանխակալ կարծիքներից և աւելի ուշք պիտի դարձնենք Խորենացու հետադարձ ուղղութեան վրայ: Ինձ թուում է՝ թէ Խորենացուն հասկանալու միակ միջոցը նրա «Պատոյից գրքի» լուրջ ուսումնասիրութիւնն է: այսինքն այն ուղին, որ արդէն ցոյց է տուել յարգելի դիտանկան պ. Բաուժարտէրը:

Ն. Բարաման

ԳՈՐԾՔ ԱՌԱՋԵՆՈՑ. — Աշխատ. Սահակ քահանայ Սահակեանց. Տիփլիս. 1896. — Այս աշխատասիրութեամբ Արթ. Սահակ քահանան մի Գ. հատոր ևս աւելացնում է իւր Հին և Նոր ուխտի Սրբազան պատմութեան ձեռնարկների վերայ, որոնք արդէն քաջ յայտնի են և գրաւել են իւրեանց արժանաւայել տեղը մեր զրպարոցական գրականութեան մէջ: Թէև մեր տեսակետով բացարձակ և աններելի մի սխալ է հեղինակի ընդունած այն կարծիքը (թող վկայէ այդ մասին ով կուզէ)՝ «որ եթէ Պողոս չէր եղել, քրիստոնէութիւնը հրէութեան մէջ կուլ կը գնար»։ «Պողոսն էր միայն, որ ճիշդ էր հասկացել Փրկչի երկնային վարդապետութիւնը, Պողոսն էր միայն, որ քրիստոնէութիւնը հրէութեան սահմանափակ նեղ շրջանից հանեց և նրան համաշխարհային կրօնի կերպարանը տուաւ»։ — և մենք ներկայ ձեռնարկի արժէքը նորա մէջ չենք տեսնում որ միջոց պէտք է տայ հետեւին ոսկերի առաքելալ Պաւղոսին լաւ ճանաչելու: բայց գնահատում ենք այն իրրեւ անհրաժեշտ փորձ մի շատ զգալի պակաս լրացնելու: Հետեւողաց առաքելալ ինքն իւր մասին այն կարծիքն է ունեցել, որ նա աւետարանի նկատմամբ ուրիշ ոչինչ է: բայց եթէ մի հասարակ պաշտօնեայ, «տրուպն առաքելոց» միւս առաքելալների շարքում, և մեզ դժուար է հաստատապէս վճռել, արդեօք նա իրաւամբ էր պարծնում միւսների առաջ՝ թէ ինքը միայնակ ամենից աւելի է գործել: Եւ ամենայն դէպս, երբ նա ասում է, թէ՝ այդ գործողը ես չեմ, «այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս»՝ լոկ բառեր չեն գոքա կամ կեղծ համեմատութեան արտայայտութիւն, այլ բղիթում են այն ամէն քրիստոնէի համար անհրաժեշտ համոզմունքից, թէ մարդիկ, ուրեմն նաև Պողոսի նման մեծ մարդը:

գործիք են միայն Աստուծոյ ձեռքին աւետարանի սուրբ գործը յառաջ տանելու համար, մինչդեռ բուն գործի հեղինակը և քրիստոնէական եկեղեցւոյ, իրրեւ տիեզերական համայնքի, միակ ճշմարիտ կատարար քրիստոնէութիւնն առանց Պողոսի՝ այդ մենք չգիտենք: բայց այնքանը հաւաստեալ գիտենք, որ նա կուլ չէր գնալ հրէութեան մէջ, որ կը գտնուէին, և գտնուել են մարդիկ՝ ընդունակ նոյնն անելու: ինչ որ Պողոս գուցէ միայն ուրիշ ճանապարհով: Եւ քրիստոնէ, որ Յովհաննէս աւետարանը գրողը (միւսները չի իշխենք)՝ առ նուազն նոյնչափ ճիշդ էր հասկացել Փրկչի երկնային վարդապետութիւնը, որչափ Պողոս, և ամենայն հաւանականութեամբ նոյնչափ և գուցէ աւելի խոր աղբնցութիւն է ունեցել իւր անմիջական շրջապատողների վերայ: Այնու ամենայնիւ ի հարկէ «հետեւողների առաքելալ Պաւղոսին պէտք է լաւ ճանաչել»։ բայց այդ ճանօթութիւնը շատ աւելի մեծ չափով կարելի է նորա սեպհական թղթերից ձեռք բերել, քան «Գործք Առաքելոցից»։ Աւստի և վերջին գրութեան համեմատ դասագիրք կազմողը, եթէ կամենում է պահել այն արդարեւ ուղիղ սկզբունքը, «որ ամենաբնորոք դասագիրքը հէնց բնագիրն է»՝ պէտք է աչքի առաջ ունենար նոյն նպատակը, ինչ որ ունեցել է նորա հեղինակը, «Գործք Առաքելոցը» բոլոր առաքելալների գործունէութեան նկարագիրը մեզ չէ տալիս: բայց արժանի է այդ անուան, որովհետեւ պարզ և ամփոփ կերպով ներկայացնում է, թէ ինչպէս Քրիստոսի աւետարանի քարոզութիւնը առաքելոց կեանքի խորհուրդն է դառնում: նոյնա միջոցով տարածում հետզհետեւ աւելի և աւելի ընդարձակ շրջաններում և հասնում մինչև այն ժամանակուայ հետեւող աշխարհի քաղաքական և մտաւոր կեանքի կեդրոնը՝ Հռոմ: — Պէտք է ցաւել, որ Հայր Սահակը շեղուելով միանգամ այս նպատակից, բնագրի ընծայած պատմութեան կանոնաւոր ընթացքի մէջ մտցրել է այնպիսի փոփոխութիւններ, որոնք ամենեւին չեն նպաստում գործի յաջողութեանը: Մի զեղծում, ինչպիսին է Անանիայի և Սափիրայի վարժումը՝ կարող էր տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ համայնքի մէջ սկզբնական ոգևորութիւնը փոքր ինչ ստուգում է: ուստի և բնագրի հեղինակն ամենայն իրաւամբ այդ պատմութիւնը աւելի ուշ է գնում: իսկ Հայր Սահակ, երբևէ առաքելոց դէմ եղած հալածանքը միանգամից պատմելու համար՝ որին ամենեւին հարկ չկար, առաջ է ձգում: Աւելի զգալի է այն աներգաշա-